Գ ՇՐՋԱՆ 1874 ՍԵՊՏԵՄԲԵՐ 7 ՇԱԲԱԹ Ն. Տ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 19 Թիւ 104

ԱՍԻԱՆ ամէն օր կը հրատարակուի բաց ի կիւրակէ և տօն օրերէ ։
Լրագրոյս գրասենեակն է Կ. Պոլիս, Սուլթան Համամ Էսատ Էֆէնտիխան միջնայարկ Թիւ 11 ։
Բաժանորդագինը կանխիկ չը վճարուած Թերթ չը ղրկուիր գաւառները ։
Ծանուցման տողը 2 ղրշ։

ԱՍԻԱ

ԲԱԺՆՈՐԴԱԳԻՆ
Կ. Պոլսոյ համար
Տարին. (300 Թիւ) 90 Ղ.
Երկամս. (50 Թիւ) 15 »
Գաւառաց համար
Տարին. (300 Թիւ) 6 մեճ.
Վեցամս. (150 Թիւ) 3 »
Եռամս. (75 Թիւ) 1 1/2 »
Փօստային ծախքը մեր վրայ է ։

ՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

10 ՓՐ. ԼՐԱԳԻՐ 10 ՓՐ.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ազգին կրօնական ու բարոյական զգացումները վիրաւորող գայթակղութիւնք այն աստիճան շատցած են ժամանակէ մ՚ 'ի վեր, որ սրտին մէջ խիղճ կրող կրօնասէր և պարկեշտ մարդիկ և մանաւանդ ընտանեաց հայրեր սոսկմամբ կընկատեն իրենց զաւակաց ապագայն ։

Իսկ ազգին եկեղեցական տեսչութիւնը՝ որ ազգին մէջ կրօնական և բարոյական զգացումը զարգացնելու պաշտօն ունի թէ՛ եկեղեցիէն և թէ՛ ազգային Սահմանադրութենէն իրեն յանձնուած, անտարբեր հանդիսատես կեցած կերևի այդ գայթակղութեանց ։

Վարդապետ մը չնութեան ամբաստանութեամբ 'ի դատ կենթարկի եղբօրը կողմէն, Լրագրաց էջերն արձագանք կըլլան այդ պժգալի ամբաստանութեան, խիղճերը կը խռովին, համեստ լսելիքներ կը վիրաւորին, մեր կրօնական տեսչութիւնը բնաւ ուշադրութիւն չընծայեր. ուրիշ վարդապետի մը դէմ տետրակ մը կը հրատարակուի սոսկալի անբարոյականութեանց և եղեռանց ամբաստանութիւններով լի. և մեր կրօնական տեսչութիւնը դարձեալ անտարբեր կը կենայ ։

Վերջապէս ուրիշ աւելի սարսափելի հրատարակութիւն մը կը տեսնուի բարձրաստիճան եկեղեցականի մը, արքեպիսկոպոսի մը, Նախորդ պատրիարքի մը դէմ, ամենադարշելի հրատարակութիւն մը, և դարձեալ մեր կրօնական տեսչութիւնն անոր առջև ալ անտարբեր կը կենայ ։

Ի՞նչ է այս անտարբերութեան պատճառը. —տկարութի՞ւն է, պարտուց գիտակցութեան պակասութի՞ւն է. —Ի՞նչ է. —չենք կրցած հասկնալ։

Եկեղեցական տեսչութեան պարտքը չէ՞ այդ գայթակղալից ամբաստանութիւնները քննել. եթէ արդար են, ճշմարիտ են, մեղապարտ եկեղեցականն անաչառութեամբ պատժել. իսկ եթէ անիրաւ են, սուտ են, զրպարտութիւն են, զրպարտիչները խստիւ պատժել քաղաքական իշխանութեան ձեռօք ։

Այս պարտքը, դժբաղդաբար մոռցուած և բարձի թողի եղած կը տեսնենք մեր ազգին կրօնական տեսչութենէն. մոռացութիւն կամ զանցառութիւն, որ մեր ազգին մէջ կրօնի և բարոյականի զգացումներն օր քան զօր տկարացնելու կառաջնորդէ. ասոր ալ վերջնն ազգին և եկեղեցւոյ քայքայումն է ։

Այս տխուր տողերը գրելու առիթ կուտայ մեզ հետևեալ հանրագրութիւնն և անոր յարակից նամակ մը՝ որք վանէն գրուած են մեզ, և առաջնոյն՝ այն է հանրագրին ներքև՝ չորս վանահարց, 22 վարդապետաց և քահանայից, և 1000ի չափ ալ աշխարհական ժողովրդոց ստորագրութիւնները կը տեսնուին (1)։

... Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ.

Քանի մ՚օր առաջ տեղւոյս ժողովրդեան հրապարակին վրայ «Խրիմեան և Գործք իւր» անուանով տետրակներ տեսնուեցան, ո՛չ ոք հիւրընկալեց զանոնք, եթէ ոչ նոքա՝ որ անոր ձախող հեղինակները կերևէին ։

Թշնամական խնդիրք նոցա դիմաց վրայ, և ցաւ համայն ժողովրդեան կողմնէ ։ Ցաւեցաւ ժողովուրդն որ հայ էր նորա հեղինակը, և իւր ցաւն կրկին եղաւ՝ երբ իմացաւ որ վասպուրականցի ալ էր ։ Զ՚ցաւելն անհնարին էր, բայց արհամարհական լռութիւն պահելն՝ ո՛չ, զի խաւարն զլոյսն կամբաստանէր, և ծանուցեալ չարութիւնն՝ զծանուցեալ առաքինութիւնն ։

Խրիմեանի նշանաբանն է հաւատարութիւն. որի՞ փոյթ թէ բռնաւորք զայն խռովարար կը կոչեն ։ Աշխարհածանօթ է նորա վեհութիւնն և սրբութիւնը. ո՞վ կը հաւատայ երբ քանի մը փաղչուէր անձինք կըսեն թէ՝ զզուելի ախտի մը գիջած է, մանաւանդ որ, նորա այն թշնամիներէն ալ են, որք Վարագայ դպրոցին և տպարանին բացուելէն յառաջ զինեցան իւր դէմ, և տպարանն անմիջապէս գոցել տուին, վասն զի Վարագայ եկամուտներէն կը զրկուէին, և մանից լուսով կը լուցուէր ժողովրդեան մտաց ճրագը՝ հալածական առնել նոցա իշխանութեան թանձր խաւարը ։

Այլ և ո՞ր յիմարն է այն՝ որ կարող չլինի գտանել թէ՝ Խրիմեանին առ Պօղոսն և առ Նշանաւոր Պօղոսեան մի ուղղած նամակները քաղաքագիտական են, և ո՛չ ջատագովական. Բայց երբ լսեցաւ այս ամենայնագոյն բան թէ՝ « համայն վասպուրական զԽրիմեան կ՚ամբաստանէ », յայնժամ ալ լսելն անուղղակի հայհոյութիւն էր Ս. Հոգւոյն դէմ, զի ամեն մի արդար մը և ճշմարիտ մը՝ բազմաց նշաւակ և բազմաց գայթակղութիւն պիտի լինէր ։

Պատմութիւնը ունէր իւր իրաւացի պատճառներն զԽրիմեան մասնաւորաց ամբաստանութենէն արդարացնելու, այլ տարակուսէր պիտի երբ վասպուրականցին լռութիւն պահէր այս խօսքին դէմ թէ՝ «համայն վասպուրական զխրիմեան կամբաստանէ»։ Արդ՝ թո՛ղ լսէ աշխարհ, որ ո՛չ թէ միայն վասպուրականն զխրիմեան չամբաստաներ, այլ և կը սիրէ և կը պատուէ բոլոր Հայաստանի և Ռուսաստանի Հայոց հետ, որք կը սիրեն զայն՝ այն ընտիր հարց պէս, որ 'ի պաշտպանութիւն ուղղափառութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ ճգնեցան և նահատակեցան. Թարգմանչաց պէս, որ ազգիս մատենագրական փառք տուին, և Մեծին Ներսէսի պէս՝ որ ազգասիրական ոգի կը շնչէր Հայաստանի որդւոց։

---

(1) Ուղղը կրնայ գալ մեր սենեակը և աչօքը տեսնել.

Վասպուրականցի բոլոր Հայեր կաթոգին անձկով նորա վերադարձին կը մնան, պատրաստ են նորա ոտից առջև ծաղիկներ սփռելու, և զայն ծաղկանց վրայ հանգուցանելու։

Ի մի բան, ո՛չ ոք կամբաստանէ զԽրիմեան վանաց մէջ, եթէ ո՛չ իրենց սերունդներէն քանիներով հանդերձ այն անիրաւ գլխաւորները, որոց վրայ քսան և հինգ տարիէ 'ի վեր ամբաստանութեանց կարկուտներ տեղացած են 'ի Պատրիարքարան և Լրագրաց մէջ, իրենց զրկողութեան, հարստահարութեան, մեքենայագործութեան և կաշառակերութեան համար։

Վերջ տալով մեր խօսից՝ կաղաչեմք, . . . Տէր, որ 'ի պատիւ ազգիս և 'ի փայլումն անմեղութեան, այն քանի տողերը ձեր պատուական թերթին մէջ հիւրընկալելու շնորհն ընել յօժարիք, որովմամբ ձեզ բարեացապարտ ստորագրեալքս ժողովուրդ վանայ քաղքի և այգեստանեայց։

(Ստորագրութիւնք)

1016 որոց 26ը Եկեղեցական Դասէն

(Մուհր)

«Խրիմեան և Գործք իւր» տետրին մէջ իբրև վկայ յիշուած անձերն ալ այդ յիշատակութեան դէմ բողոքի նամակներ ղրկած են զորս երկուշաբթի օր պիտի հրատարակեմք։

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ

Ի.Գ.

ԱՌ Գ. ՇԱՀՆՈՒՐ

(29 Օգոստոս, 1874.)

Զմիւռնիոյ «Արևելեան Մամուլը» իւր վերջին թիւին մէջ մի նամակ կը հրատարակէ ուր մեր գրական պայքարովը կը զբաղիք դուք։

Կ'ուզէի անպատասխան չը թողուլ ձեր սիրուն և ողջամիտ յօդուածին մի քանի կէտերը. սակայն, միտք կը լռէ երբ հոգին է որ խօս կ'առնու։

Դուք, որ մի այնքան ազնիւ սիրտով էք օժտուած, կրնաք ըմբռնել թէ որչափ կը վշտացնէր հոգիս երբ կը տեսնէի անկերպարան վիճակը ազգային լեզուին. մին այն հզօրագոյն տարրներէն որք հայ ժողովուրդին կեանքը պիտի պահպանեն իւր անկումին մէջ։

Այս վիշտը, ամեն ազգասէր գրագէտ ունեցած է 'զայն. այլ քիչեր փորձած են դարման տանել։ Ես, յետինս գրական մարդերի մէջ, տենչերէ մղուած քան հմտութիւններէ, ուզեցի ազգային միութիւնը շաղկապել՝ լեզուի միութիւն գոյացունելով. ուզեցի որ Հայը, Թափառական օտար երկինների տակ և սորուն իւր բնագաւառին մէջ, մի լեզուաւ սիրէ և մի լեզուաւ բողոքէ, մի լեզուով օրհնէ և մի լեզուով հայհոյէ, մի լեզուով կողկողէ և մի լեզուով անիծէ։

Ներուի ինձ ասել, ոչինչ աւելի գովելի էր քան այս իղձը։

Ազգային լեզուին անմիաբանութիւնը միայն չէր որ ցաւ կ'ազդէր ինձ. շատ անկարգութիւններ, շատ հակասութիւններ մուտ գտած էին հոն։ Մեր նշանաւոր գրագէտներէն առաջնորդուած, ուզեցի որ հայ լեզուն սահմանադրութիւն ունենայ և դասական լինի. ուզեցի հաշտեցունել մեր գրական բազմադէմ դրութիւնները, տրամաբանութիւնով բնորոշական լինել և բնորոշականութիւնով կանոնաւոր և հեշտ հանդիսացունել արդի լեզուն։

Ներուի ինձ կրկնել, ոչինչ աւելի օգտակար էր քան այս աշխատութիւնը։

Ուստի ես իրաւունք ունէի թերութիւններիս համար ներում և դիտաւորութիւններիս համար խրախոյս ակնկալել իմ ազգէն։

Երբ հայ լեզուն վատթարանայ, կը վնասի՞մ միթէ. երբ հայ լեզուն բարեկարգուի, կը շահի՞մ միթէ. — Երբեք, երբեք։ Ու քանի որ այս խնդիրին մէջ անձնական օգուտ չը կայ ինձ համար, քանի որ ազգասիրութիւնը միայն յառաջ կը վարէ 'զիս, իմ անձը, որքան անշան լինի, յարգանքի արժանի է և ոչ թշնամանքի։

Ի՞նչ կը նշանակեն ուրեմն այս քսու ակնարկութիւնները, ի՞նչ այս բուռն նախատինքը։ Ի՞նչ կ'ուզեն յինէն այս դիւախոլոտ ասոխները։ Ի՞նչ է այս անվերջանալի պատերազմը։

Ե՞րբ պիտի դադրի այս անխիղճ հալածանքը. Ե՞րբ պիտի լռեն այս անմանուն իժերը։

Այլ ձեզ շնորհակալ եմ ես։

Դուք, հեռուէն այս մարտը դիտելէ յետոյ, կը գաք վերջնապէս դատապարտել իմ հակառակորդները և կորովի աջով սա վճիռը արձանագրել ապագային համար. «Կ'ժտիմ ըսելու թէ բազմաթիւ գրագէտներու մէջ՝ որ Գրոց-ն ֆոլէէն 'ի քնին առնլու եկան՝ չտեսայ մէկն որ կամէր կամ կարենար ճշմարիտ քննադատի մը պաշտօնը վարել . . . հապա ի՞նչ տեսայ. ընդհանրապէս կիւկտուր, մամնական, մուխ, բառական, սփիտական դատումներ, որոց շարժառիթները դիւրին է որոնել մերթ նախանձու, մերթ խմատակութեան, մերթ ամբարտաւանութեան, մերթ անձուկ կրօնասիրութեան մէջ։»

Ձեր նամակը, մին այն չքնաղ էջերէն որք հայ մամուլին մէջ կը փայլին մերթ ընդ մերթ, մի փառաւոր յաղթանակ է թշնամիներիս դէմ որոց քով Բօրի «անամօթ» քննադատները փոքրիկ սուրբեր են։

Վեհանձն երիտասարդ, ձեր բանաստեղծ և իմաստասէր գրիչը մի նախախնամական դեր կը կատարէ այս ազգին մէջ։

Չը կրնամ ընդունիլ ձեր շռայլ ներբողները, որոց արժանի չեմ բնաւ. այլ շնորհապարտ ոգիով կ'ընդունիմ ձեր քաջալերը, թէև չ'եմ ճանաչեր ըզ ձեզ։

Քաղցր է ինձ տեսնել, տխմար Գուրգէններու քով որք ինձ դէմ կից կ'արձակեն, հանճարեղ Շահնուրներ որք խրախոյս կը կարդան։

Մի՛ կարծէք թէ ձեր անունը այս առօրեայ թուղթին մէջ պիտի մնայ։ Արդէն քանդակուած է նա մի սրտի մէջ որ չը գիտէ մոռնալ։

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ

Երէկի Ասիային մէջ Ազատեան սանուհիներէն Ազնուափայլ Օր. Դոմնի Գաբրիէլեանի Նորապսակ ամուսինին անունը սխալմամբ Դըլըճեան Գէորգ Էֆէնտի գրուեր է փոխանակ Կարապետ լինելու։

ՍՏԱԽՕՍ ԹԵՐԹԻՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻՆ ՍՐԽԱՅՈՒԹԻՒՆԸ

Ստախօս թերթը հինգշաբթի օր կը խոստովանի թէ Ընդհ. ժողովը անկարգութեանց մէջ յառաջացած է և կը յուսայ որ Ռուսինեան էֆէնտին կանոնագիրը ընդունելով, այդ անկարգութիւնք վերջ կ'առնուն։

Ընդհ. ժողովը մինչև հիմա կանոնաւոր էր, երբ դու հրաժարելով դուրս ելար, այն ատեն անկանո՞ն եղաւ։ Ընդհ. ժողովին անկարգութիւններուն դէմ բողոքողները սրիկայ կը կոչէիր. հիմա դու ալ՝ որ Ընդհ. ժողովը անկարգութիւններու մէջ յառաջացած կը հրատարակես, զքե՞զ ինչ կոչելու է։ Կ'երևի թէ այս յօդուածը Ալթըն Օղլուի գինետունին մէջ խըմբագրուած է. վասն զի ոչ թէ միայն խօսքերը շիտակ չեն ընդգրկեր, այլ և գինովներու յատուկ հայհոյութիւններով լցուած է ։

Երբ հազարաւոր ժողովրդեան ընդհ. ժողովին դէմ արած բողոքը սրիկայական ճնշում կ'անուանես, սրբիկայաբար անունը տուած կը լինիս քեզ, զի քանիցս անգամ ժողովուրդը առաջնորդած ես այդպիսի բողոքներու ։

Ինչպէս մի օր յառաջ գրած էիր, սրբիկան ճակատին վրայ դրոշմ չունենար, այլ իւր գործերէն կը ճանչցուի։

Հիմայ կը հարցունենք թէ սրիկան ո՞վ է. ժողովու՞րդը՝ որ իւր երեսփոխաններուն անսահման բռնութեան դէմ կը բողոքէ, թէ Ստախօս Թերթին խմբագրապետը՝ որ Սամաթիոյ եկեղեցւոյն ու դպրոցին շինութիւնին համար հանգանակուած դրամները անխղճաբար կորզած անցուցած, եկեղեցւոյն մատակարարութեանը մէջ խարդախութիւններ ու նենգութիւններ արած է ։ Մեք չեմք որ կ'ասեմք այս խօսքերը՝ այլ իւր պաշտօնակից մի Թաղ. խորհրդականը իբրև գող ամբաստանած է զնա վարչութեան առաջը և յայտնած թէ բոլորովին պատրաստ է ասածը ապացուցանելու. սակայն վարչութիւնը հողով ծածկած է Օգոսէսի այդ զազիր գործը որպէս զի նուիրատու ժողովուրդը գայթակղելով շինութեան գործը չը կասի ։ Դարձեալ այս մարդն է որ Ազգաղբիւրի հանգանակութեան 20 ոսկին այլ և այլ պատրուակներով կոկորդն անցուցած, օգոր—ճէնի մի խնդիրով Հայկական ընկերութեան մէջ նշանաւոր եղած և մինչև ցարդ ազգը տակն ի վրայ անելու աշխատած է ։

Արդ՝ թող աշխարհ դատէ թէ ո՞վ է սրիկան, ժողովո՞ւրդը թէ Ստախօս Թերթին խմբագրապետը ։

ՎԱՆՑԻ ՊՕՂՈՍԻՆ ԴԱՏԸ

Վանցի Պօղոսին դատախազները հինգշաբթի օր ժամը 4 ին ատեանները Քննիչ յանձնաժողովին ներկայացեր են ։ Յանձնաժողովին անդամներէն Գեր. Խորէն Սրբազան ազդարարեր է իւրեանց թէ Պօղոսը ժամը երկուքին ներկայացեր է, բայց Ոստիկանութեան դուռէն մի ուրիշ դատի համար կանչուած լինելով, ստիպուեր է հոն երթալ ։ Սակայն մեք ստոյգ աղբիւրէ կիմանամք որ Պօղոս նոյն օրը Ոստիկանութեան դուռն ալ չ'է գնացեր և Պատրիարքարանի Եասաճիներէն մէկին բերնով լուր ղրկեր է հոն թէ հիւանդացած է, մինչդեռ ողջ առողջ կը շրջի ամենուրեք ։

Պօղոսի դատին մէջ այս դարձուածները, այս փախուստները ուշքերնուս առաջը բերելով, խնդրոյն վերջնական վախճանը որու ի նպաստ ըլլալիքը՝ դիւրին է գուշակել այժմէն ։

Այս դատին մէջ մի զարմանալի կէտն ալ սա է որ Մագսուտեան վսեմ. Սիմոն պէյ Քաղաքական Ժողովին ատենապետն, Քննիչ մասնաժողովին ալ ատենապետ կարգուած է. ասել է թէ իւր քննութեան տեղեկագիրը իւրեան պիտի մատուցանէ վաւերացնելու համար ։ Ինչ հարկ ուրեմն զատ մի Քննիչ յանձնաժողով կազմելու ։

ՍՈՒՏ է նաև Օրագիրին հրատարակած թէ Սամաթիոյ Մկրտիչեան Պօղոս էֆէնտին ամբաստանողաց կողմէն փոխանորդ կարգուած է ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննա 17 սեպտ.

Պօրսան աղէկ է. գիները միշտ բարձր ։

Բէչթա 17 սեպտ.

Կը հաւատեն հոս թէ երկաթուղիներու միացման համար Զիչի կոմսին Պուքրէշի մէջ յանձնուած պաշտօնը յաջողելով, գլխաւոր կէտերուն վերայ համաձայնութիւն գոյացեր է ։

Պէրլին 17 սեպտ.

Տանիմարքաի հպատակներուն Շլեզվիկեն արտաքսուիլուն համար Տանիմարքաի կառավարութիւնը իւր դեսպանին միջնորդով հոս բողոքելուն լուրը անհիմն է ։

Պայօն, 17 սեպտ.

Գարլոսեան խումբին պաշտօնական լրագիրը Ռուսիոյ կայսրին մի նամակը կը հրատարակէ որ իւր համակրութեան մասին Տօն Գարլոսը կ'ապահովէ ։

Լոնտրա, 17 սեպտ.

Թայմզ լրագիրը կը հրատարակէ թէ Սանկուէզայի մէջ Գարլոսեանները յաղթող հանդիսացեր են ։

Ուօշինկթըն, 16 սեպտ.

Գերմանիոյ դեսպան Պ. Շուարձ իւր վկայագիրները Կրանդ նախագահին ներկայացուց ։

Նոր Օրլէանի մէջ խռովութիւնները կը շարունակուին ։ Շատ սևեր սպաննուեր են ։ (1)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կայսրը Լիվատիա եկած լինելուն առիթով խնդակցութեան մի հեռագիր ղրկեր է Վեհափառ Սուլթանին Նորին Վեհափառութիւնն ալ անմիջապէս պատասխաներ է շնորհակալութեան և մտերմութեան զգացումներ յայտնելով ։

—Վսեմ. Սավֆէթ փաշան Պ. Հուլտը կայսերական ճեմարանին Օսմանեան պատմութեան դասատու կարգեր է ։

—Սուրբիոյ կուսակալ վսեմ. Հալէթ փաշային 10,000 և Քասթամոնիի կուսակալ վսեմ. Հաճի Ալի փաշային 7,500 դահեկան դադարման ամսական թոշակ սահմանուեր է ։

—Արևելեան Ճիզվիթ կրօնաւորաց նախկին նախագահ Պ. Պօռէ Բարիզի Լազարեան կրօնաւորներուն նախագահ անուանուեր է ։

—Աւստրիա—Հունգարիոյ դեսպան Զիչի կոմսը հինգշաբթի օր Մայրաքաղաքս հասաւ ։

—Բարձր Շէյխ—իւլ—իսլամ էֆէնտին իւլէմաներուն մի ամսականը զեղչելով անչափահաս որբերու սընտուկին յանձներ է զայն ։

—Վեհափառ Սուլթանին ընծայուելու համար Եգիպտոսի Խտիվէն կազմէն Լոնտոն ապսպրուած զրահաւոր նաւերուն շինութիւնը լրանալու վրայ է ։

—Կ'ասեն թէ պաշտօնէից ժողովը Սամոսի արդի կառավարութիւնը ընդունիլ առաջարկեր է Վեհափառ Սուլթանին ։

—Գանգատներ կը լինին թէ ծըխախոտի ծրարներուն մէջ վրան նըշանակուածին չափ ծխախոտ չը պարունակուիր ։

Այս մասին ծխախոտի մենավաճառութեան ուշադրութիւնը կը հըրաւիրուի ։

—Երեքշաբթի օր Սուլթան Ահմէտի կեդրոնական բանտին մէջ սաստիկ կռիւ լինելով, բանտարկեալներէն մի քանին զիրար ծանրապէս վիրաւորեր են ։

—Սոգրդի կղզին բաւական ժամանակէ հետէ տիրած սովն ու երաշտութիւնը բնակիչները յուսահատ թշուառութեան մը մէջ ձգեր է ։

—Բերայի թաղապետական խորհուրդին անդամոց ընտրութիւնը կատարուած լինելով, քուէից առաւելութիւնով հետևեալները ընտրուած են ։ Քեամիլ պէյ, Զարիֆի էֆէնտի, Խրիսթաքի էֆ., Սիմոն պէյ, Եէնիտիւնեա էֆ., Ալի պէյ, Մ. Լօվալ, Մուսէիզ Ալի էֆ. Մ. Սոտիրա, և Հօլաս, Գիրեապօ և Ապտուլղանէ Յովհաննէս էֆէնտիները ։

—Երկուշաբթի օր Շումլայի մէջ հրդեհ պատահելով, Բէշիտ փաշայի տունը ամբողջապէս այրեր է ։ Երկաթուղիին երկրաչափներուն դիւանն ալ հոն լինելով, ճամբու ծրագիրները ալ հրոյաճարակ եղեր են ։

—Սուրբիոյ նորընտիր կուսակալ և նախկին Մեծ Եպարքոս վսեմ. Էսատ փաշան առանց Կ. Պօլիսէն անցնելու Մէսինայի ճամբով Դամասկոս պիտի երթայ։ Հաւանականաբար այս երկուշաբթի Գոնեաէն մեկնած է,

---

(1) Այս հեռագիրը Պօրտանօփ գործակալութեան ղրկածն է. իսկ Ռէօյթըր Հաւասի գործակալութեան սեպտ. 16ին Նոր—Օրլէանէն առած հեռագիրը կ'իմացունէ թէ քաղաքը հանդարտած է ։

Ծ. Խ.

—Մէճմուայի Հավատիս Լրագիրը Թուրքի դատարաններուն նկատմամբ հրատարակած քննադատութեանը պատճառով մի ամիս դադարման դատապարտուեցաւ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ· ՊՕԼԻՍ ՍԵՊՏԵՄԲԵՐ 6

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմ· ոսկին 100 ղուրուշի հաշւով

	Ղրշ·	Փրյ·
Անգղ· ոսկի	109	10
Գաղղ· ոսկի	87	12
Բօլ	89	10
Գրըմից	51	25
Ճերմակ մէճիտ տպրբ· . .	101	19
Հինգնոց	104	35
Մէթալիք	104	05
Գլինձ	127	20

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Ընդհ· պարտ· Արժ· բաց		49 27
բարձր գին		49 27
» » ցած «		49 10
«կէս օր»		49 10
Փոխառութիւն	63ի	536
»	65ի	340
»	69ի	284 1/2
»	72ի	83 1/2
Քրէտի Ճէնէրալ		10—12
Սօսիէթէ Ճէնէրալ . . .		7—10
Սօսիէթէ Օթօման . . .		4—28
Կ· Պօլսոյ Պանգային		5—2
Րումէլիի երկա· Արժ· հին		120
» » » նոր		94
Թրամվէյ «անկտրօն»		500

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ի Գ· ԱՍԼԱՆԵԱՆԷ

Աշխարհի այլ և այլ մասերուն՝ մանաւանդ Եւրոպիոյ մէջ վերջին տարիները պատահած քաղաքական փոփոխութիւններն՝ հայերէն նոր աշխարհագրութեան մը պէտքն զգալի ըրած էին։

Այս կարևոր պէտքը լիովին լցուցած է սոյն ընտիր աշխատասիրութիւնը, միանգամայն Թուրքիոյ վրայ ալ ընդարձակագոյն տեղեկութիւն տալով, որ ուրիշ աշխարհագրութեանց մէջ կը պակսէր, և որոյ պէտքն ալ զգալի էր։

Կը գտնուի Մէրճանը Պաղտասար աղայի գրատունը և այլ գրավաճառաց քով։ Գին 2 1/2 Ֆրանք։

ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Առողջական և Ընտանեկան

32 երեսէ բաղկացեալ

Խմբագրութեամբ Տօքթօր

Բարոնեակ Իւթիւճեանի

Բաժանորդութեան գինն է տարեկան հինգ արծաթ մէճիտ. երկամսեայ՝ մէկ արծաթ մէճիտ։

Մէկ թիւին գինն է հինգ ղրուշ։

Բաժանորդագրութեան տեղն է Կ· Պօլիս Պալըք բազար, Նաֆիէ խան թիւ 7։

Ա· ՏԸՊԷԻ

ՑԱԲՏՆՈՒԹԻՒՆՔ
ԾԱԾԿԵԼՈՑ
ԿԱՄ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱԳՈՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Որ ի նախնի ժամանակաց հետէ
մինչև ցայսօր

Թարգմանեաց
Ն· ՃԻՎԱՆԵԱՆ

ՏԵՏՐ Ը·

Թերթ առ թերթ կը հրատարակուի շաբաթը մի անգամ, Ցերորդ տետրն ալ հրատարակուեցաւ։ Կը ծախուի ամեն գրավաճառներու քով և կամուրջի գլուխին պարագան 40 փրյ· գնով։

ՀԱՏՈՒԱԾՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԵԱԼՔ ՅԱՐԱՐԱՑԻ ՊԱՏՄԱԳՐԱՑ

Ի ՁԵՌՆ ՏՈՔԹՈՐ ՄՈՐԴՄԱՆԱՅ
ԱՐԵՒԵԼԱԳԷՏԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՀԱՅ
ԿԱՐԱՊԵՏ Ս· ԻՒԹԻՒՃԵԱՆ

ՏԵՏՐ Ա·

Արևելեան պատմագէտներէն հռչակաւորն Տօքթօր Մորթման Գերմանացին՝ որ վանի սեպագիրներուն մասին արած յայտնութիւններովը և մեր ազգային պատմութեան մատուցած ծառայութիւններովը այնչափ հռչակաւոր հանդիսացած է, ահաւասիկ մի նոր գիրք ալ հրապարակ կը հանէ արաբացի պատմագիրներէ քաղելով, որով մեր ազգային պատմութեան ինչ ինչ ադօտ կէտերուն վրայ նոր լոյս մ'ալ սփռած կը լինի։

Երբ նոյն իսկ օտարազգի մը մեր ազգային պատմութիւնը այնչափ կը սիրէ որ իւր կեանքը զայն հետազօտելու կը նուիրէ և իւր ծանր աշխատութեամբը ստացած տեղեկութիւնները կը ներկայացունէ մեզ որ դիւրով վայելեմք ըղնոսա, որչափ դատապարտելի կը լինի մի Հայ երբ անտարբեր մնայ այդ գիրքէն ունենալու իւր Թանգարանին մէջ։

Շնորհակալ եմք Մեծ· Տօքթօր Մորթմանէն և Իւթիւճեան էֆէնտիէն որ այսպիսի հետաքրքրական և կարևոր գիրք մը Հայ մատենագրութեան մէջ աւելցուցին։

Գինն է 1/4 արծաթ մէճիտ։ Կը գտնուի կամուրջի գլուխին պարագան։

ԱՇԽԱՐՀ
ԿԱՄ
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
ԱԶԱՏ ԲԱՆՏ
ԵՒ ԿԱՄ
ՀՈՍ ՈՒ ՀՈՆ

ԳՐՈՒԱԾՔ
Յարութիւն Ց· Մանուկի
Ամասիացւոյ

Աստուածաբանական նիւթերու վրայ խօսող այս տետրը կը ծախուի 1/4 արծաթ մէճիտի։

ՍՏՈՒԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՔԵՐԹՈՒԱԾՔ

Ի ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՆԱՐ—ՊԷՅ

Գինն է կէս արծաթ մէճիտ։

ՊԱՃԷՆ ՄԱՐԱՋԱՒՏԻՆ
ԴԱՏԱՍՏԱՆԸ

ՀԱՏՈՐ Բ· ՏԵՏՐ Զ·

Այս հետաքրքրաշարժ գիրքին Ա· հատորը աւարտած լինելով, Բ· հատորն ալ տետր առ տետր կը հրատարակուի Մէկ տետրին գինն է 40 փր·

ՏԷՐ ԼՐԱԳՐՈՅ ՅՈՎԱԿԻՄ Գ ՐԷԻՍԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե· Մ· ՏՆՏԵՍԵԱՆ